ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«09» փետրվարի 2018 թվականի № 16-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՈԼՈՐՏՈՒՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի №1721-Ն որոշման 3-րդ կետը և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի փետրվարի 6-ի №25Լ որոշումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններին գումարի փոխանցման ընթացակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

/ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարարի
2018թ. փետրվարի «09»-ի
16·ի հրամանի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՈԼՈՐՏՈՒՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ

1. Սույն ընթացակարգով սահմանվում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի №1721-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից ընտրված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններին (այսուհետ՝ ընտրված կազմակերպություն) գումարի փոխանցման ընթացակարգը:
2. Նախարարությունը Հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 6-ի №25Լ որոշման համաձայն՝ Հանձնաժողովի համար բացված համապատասխան գանձապետական հաշվին Հանձնաժողովի կողմից փոխանցված գումարը Որոշման հավելվածով սահմանված կարգի և պայմանների 13-րդ, 14-րդ և 22.4-րդ կետերի համաձայն միչև յուրաքանչյուր եռամսյակի առաջին ամսվա ավարտը փոխանցում է ընտրված կազմակերպություններին, բացառությամբ 2018 թվականի 1-ին եռամսյակի համար նախատեսված գումարի, որը փոխանցում է մինչև 2018 թվականի առաջին եռամսյակի վերջին ամսվա ավարտը: